



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք, գ. Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ապրիլի 2024 թվականի N 175-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԳԱՌՆԻԿ ՍԱՇԱՅԻ ԲԱԼՈՅԱՆԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 9-ի թիվ 22-Ն որոշման հավելվածի 16-րդ կետը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի եզրակացությունը և քաղաքացի՝ Գառնիկ Բալոյանի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը. **որոշում եմ**

Հայաստանի Հանրապետության Շիրակ մարզի Աշոցք համայնքի 2024 թվականի բյուջեով նախատեսված «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածից, (բաժին 10, խումբ 4, դաս 1, տող 3040 «Ընտանիքի անդամներ և զավակներ») Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Վարդաղբյուր բնակավայրի բնակիչ Գառնիկ Սաշայի Բալոյանին տրամադրել միանվագ դրամական օգնություն 50000 /հիսուն հազար/ դրամի չափով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՅՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ



2024 թվականի ապրիլի 19
գյուղ Աշոցք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք, գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ապրիլի 2024 թվականի N 176 -Ա

**ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋԱՎԵՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ, ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ 20/1 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՀՐԱԶԻԿ ՍՏԵՓԱՆԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ, ՔԱՐԻԿ ԱՎԵՏԻՔԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ, ԽԱԶԻԿ
ՍՏԵՓԱՆԻ ՄԻՔԱԵԼՅԱՆԻՆ, ԳԱՅԱՆԵ ՌՈՔԵՐՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՐԱԶԻԿ
ՄԻՔԱԵԼՅԱՆԻՆ, ՍՅՈՒՋԱՆՆԱ ՀՐԱԶԻԿԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ, ՆԱՐԱ ԽԱԶԻԿԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ,
ԱՐՓԻՆԵ ԽԱԶԻԿԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ, ՍՏԵՓԱՆ ԽԱԶԻԿԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ԵՎ ԳՈՌ ԽԱԶԻԿԻ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՆՈՐ ՄԻԱՎՈՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴԻՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի 2) ենթակետով, 33-րդ կետով և հիմք ընդունելով Գոռ Մելիքյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ N 20022024-08-0029 վկայականը, չափագրման որակավորում ունեցող մասնագետի կողմից տրված հողամասի բաժանման սխեման, հողամասերի հատակագծերը և Գոռ Միքայելյանի 2024 թվականի ապրիլի 15-ի Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը, **որոշում եմ.**

1. Տարանջատել Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, բնակավայր Սիգավետ, 1-ին փողոց, բնակելի տուն 20/1 հասցեում գտնվող, Հրաչիկ Ստեփանի Միքայելյանին, Քնարիկ Ավետիքի Ավետիսյանին, Խաչիկ Ստեփանի Միքայելյանին, Գայանե Ռոբերտի Սարգսյանին, Հարություն Հրաչիկի Միքայելյանին, Սյուզաննա Հրաչիկի Միքայելյանին, Նարա Խաչիկի Միքայելյանին, Արփինե Խաչիկի Միքայելյանին, Ստեփան Խաչիկի Միքայելյանին եվ Գոռ Խաչիկի Միքայելյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տունը և կառուցման և սպասարկման համար զբաղեցված հողամասը՝ (վկայական N 15042024-08-0038) համաձայն չափագրման որակավորում ունեցող մասնագետի կողմից տրված հողամասի ու շինության բաժանման սխեմաների:

2. Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, բնակավայր Սիգավետ, 1-ին փողոց, բնակելի տուն 20/1 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

1) 0.04721 հեկտար մակերեսով հողամասի (առաձնացվող հատված 1) և դրա վրա գտնվող շինությանը փոստային հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, բնակավայր Սիգավետ, 1-ին փողոց, բնակելի տուն 20/1

2) 0.03569 հեկտար մակերեսով հողամասի (առաձնացվող հատված 2) և դրա վրա գտնվող շինությանը փոստային հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, բնակավայր Սիգավետ, 1-ին փողոց, բնակելի տուն 20/2:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք, գ. Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ապրիլի 2024 թվականի N 177 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 04-Ի N 279-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 2024 թվականի փետրվարի 5-ի թիվ Կ-05022024-08-0018 որոշումը, որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 04-ի թիվ 279-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
- 1) Որոշման վերնագրում, նախաբանում և 1-ին կետում՝ «172,93» թվերը փոխարինել «173,4» թվերով և «122,46» թվերը փոխարինել «140,58» թվերով:
 - 2) Որոշման 1-ին կետում՝ 363620 (երեք հարյուր վաթսուներեք հազար վեց հարյուր քսան) թվի ու բառերի փոխարեն գրել՝ 458900 (չորս հարյուր հիսունույթ հազար ինը հարյուր) թիվը ու բառերը և «316660» թիվը փոխարինել «411940» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2024 թվականի ապրիլի 19
գյուղ Աշոցք





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Աշոցք, 0245 2-14-82, ashotsq.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ապրիլի 2024 թվականի N 178-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Աշոտ Սամվելի Տիգրանյանը /ՀՀ, Շիրակի մարզ, Աշոցք, գ. Գոգհովիտ, 10-րդ փողոց, տուն 2, անձնագիր՝ AV0389644/, հանդիսանալով անշարժ գույքի հարկ և պայմանագրով նախատեսված վարձավճար վճարող սուբյեկտ, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել անշարժ գույքի հարկ վճարելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված պայմանագրով նախատեսված վարձավճար տալու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2024 թվականի ապրիլի 22-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ անշարժ գույքի հարկի գումարի և պայմանագրով նախատեսված վարձավճարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված տվյալների հարկման օբյեկտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Գոգհովիտ բնակավայրի տարածքում գտնվող ներքոհիշյալ անշարժ գույքերը հանդիսանում են քաղաքացի Աշոտ Սամվելի Տիգրանյանի սեփականությունը և հարկային օրենսգրքով սահմանված կարգով վերջինիս կողմից չի կատարվել հողի հարկ վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է՝

- 1) գ. Գոգհովիտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-034-0018-0014/ 0.058 հա բնակելի կառուցապատման հողի համար,
- 2) գ. Գոգհովիտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-034-0026-0005/ 0.158 հա բնակելի կառուցապատման հողի համար,
- 3) գ. Գոգհովիտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-034-0102-0008/ 0.538 հա անջրդի վարելահողի համար,
- 4) գ. Գոգհովիտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-034-0121-0042/ 0.058 հա անջրդի վարելահողի համար,
- 5) գ. Գոգհովիտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-034-0102-0007/ 0.312 հա անջրդի վարելահողի համար,
- 6) գ. Գոգհովիտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-034-0111-0012/ 0.306 հա ջրովի վարելահողի համար,
- 7) գ. Գոգհովիտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-034-0115-0041/ 0.396 հա անջրդի վարելահողի համար,
- 8) գ. Գոգհովիտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-034-0121-0054/ 0.284 հա անջրդի վարելահողի համար,
- 9) գ. Գոգհովիտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-034-0103-0012/ 0.548 հա անջրդի վարելահողի համար,
- 10) գ. Գոգհովիտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-034-0030-0039/ 0.609 հա բնակելի կառուցապատման հողի համար,
- 11) գ. Գոգհովիտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-034-0121-0056/ 0.458 հա անջրդի վարելահողի համար,
- 12) գ. Գոգհովիտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-034-0105-0036/ 0.37 հա ջրովի վարելահողի համար,
- 13) գ. Գոգհովիտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-034-0121-0055/ 0.472 հա անջրդի վարելահողի համար,
- 14) գ. Գոգհովիտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-034-0111-0013/ 0.577 հա ջրովի վարելահողի համար

ընդհանուր մինչև 2020 թվականը ապառքը՝ 267 289 ՀՀ դրամ, տույժ՝ 130 417 ՀՀ դրամ, վճարման ենթակա՝ 397 706 դրամ, 2021-2024 թվականներին ապառքը՝ 90 143 ՀՀ դրամ, տույժ՝ 11 706 ՀՀ դրամ, վճարման ենթակա՝ 101 849 ՀՀ դրամ:

Համաձայն ՀՀ Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի հետ Աշոտ Սամվելի Տիգրանյանի 06/09/2017 և 25/04/2017 կնքած պայմանագրերի տվյալների՝ հարկման օբյեկտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Գոգհովիտ բնակավայրի տարածքում գտնվող անշարժ գույքերը հանդիսանում են քաղաքացի Աշոտ Սամվելի Տիգրանյանի վարձակալության պայմանագրի օբյեկտ և քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով վերջինիս կողմից չի կատարվել պայմանագրով նախատեսված վարձավճար վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է՝

ընդհանուր ապառք՝ 133 039 ՀՀ դրամ, տույժ՝ 71 103 ՀՀ դրամ, ընդհանուր՝ 204 142 ՀՀ դրամ պարտք:

Ընդհանուր առմամբ՝ Աշոտ Սամվելի Տիգրանյանի պարտքը կազմում է 703 697 ՀՀ դրամ:

Աշոտ Սամվելի Տիգրանյանը պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 04.03.2024թ. ծանուցումը/ վարչական վարույթի հարուցման մասին: Վերջինիս առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 7-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով

լսումներ անցկացնելու վերաբերյալ և կատարել համայնքի հանդեպ առաջացած հարկային պարտավորությունները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Աշոտ Սամվելի Տիգրանյանը ծանուցումը և իրազեկումը ստանալուց հետո, պնդում չի ներկայացրել լսում անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լսում չի անցկացվել:

3.Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 224-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, ինչպես նաև բազմաբնակարան շենքի բնակարանների և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերի՝ բազմաբնակարան շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով այդ սեփականատերերին պատկանող հողամասի մասով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ համայնքի ղեկավարն օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 224-րդ, 225-րդ, 398-րդ և 401-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-60-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Քաղաքացի Աշոտ Սամվելի Տիգրանյանից հոգուտ Աշոցք համայնքի բյուջե գանձել 703 697 (յոթ հարյուր երեք հազար վեց հարյուր իննսունյոթ) ՀՀ դրամ՝ որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Որոշումն օրենքով սահմանված կարգով՝ պատշաճ ձևով հանձնել Աշոտ Սամվելի Տիգրանյանին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակիցներին իրազեկելուն հաջորդող օրվանից(ashotsq.am և azdarar.am կայքերի միջոցով):

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Աշոցք համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2024 թ. ապրիլի 22
գ. Աշոցք





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՅՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք, գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ապրիլի 2024 թվականի N 179 - Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի N 164-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 2024 թվականի ապրիլի 19-ի թիվ Կ-19042024-08-0090 որոշումը, որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2024 թվականի ապրիլի 10-ի թիվ 164-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) Որոշման 1-ին կետում՝ «105,4» թիվը փոխարինել «150,4» թվով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՅՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ



2024 թվականի ապրիլի 22
գյուղ Աշոցք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Աշոցք, 0245 2-14-82, ashotsq.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ապրիլի 2024 թվականի N 180-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Գոռ Լյովայի Սարգսյանը /ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Ռուսթավի փողոց, շենք 7, բն. 80, AT0202913/, հանդիսանալով անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2024 թվականի մարտի 4-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ անշարժ գույքի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված տվյալների հարկման օբյեկտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Թավշուտ և Բավրա բնակավայրերի տարածքում գտնվող ներքոհիշյալ անշարժ գույքերը հանդիսանում են քաղաքացի Գոռ Լյովայի Սարգսյանի սեփականությունը և հարկային օրենսգրքով սահմանված կարգով վերջինիս կողմից չի կատարվել հողի հարկ վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է՝

1) գ. Թավշուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-041-0125-0014/ 1,3 հա անջրդի վարելահողի համար,

- 2) գ. Թավշուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-041-0103-0011/ 0,49 հա անջրդի վարելահողի համար,
- 3) գ. Թավշուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-041-0112-0021/ 1,62 հա անջրդի վարելահողի համար,
- 4) գ. Թավշուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-041-0105-0020/ 0,4 հա անջրդի վարելահողի համար,
- 5) գ. Թավշուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-041-0009-0046/ 0,2 հա բնակելի կառուցապատման հողի համար,
- 6) գ. Թավշուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-041-0113-0008/ 0,2 հա անջրդի վարելահողի համար,
- 7) գ. Թավշուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-041-0126-0017/ 1,39 հա անջրդի վարելահողի համար,
- 8) գ. Թավշուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-041-0123-0016/ 0,46 հա խոտհարքի համար,
- 9) գ. Թավշուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-041-0003-0002/ 0,148 հա բնակելի կառուցապատման հողի համար,
- 10) գ. Թավշուտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-041-0001-0015/ 0,36 հա բնակելի կառուցապատման հողի համար,
- 11) գ. Բավրա, /կադաստրային ծածկագիր՝ 08-026-0201-0002/ 0,71 հա անջրդի վարելահողի համար,
- 12) գ. Բավրա, /կադաստրային ծածկագիր՝ 08-026-0378-0039/ 0,87 հա անջրդի վարելահողի համար,

ընդհանուր մինչև 2020 թվականը ապառքը՝ 257 391 ՀՀ դրամ, տույժ՝ 126 551 ՀՀ դրամ, վճարման ենթակա՝ 383 942 ՀՀ դրամ, 2021-2024 թվականներին՝ ապառք՝ 103 836 ՀՀ դրամ, տույժ՝ 13 585 ՀՀ դրամ, ենթակա վճարման՝ 147 421 ՀՀ դրամ, ընդհանուր՝ 531 363 ՀՀ դրամ պարտք:

Գոռ Լյովայի Սարգսյանը պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 04.03.2024 թիվ 14 ծանուցումը/ վարչական վարույթի հարուցման մասին: Վերջինիս առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 7-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լուծման անցկացնելու վերաբերյալ և կատարել համայնքի հանդեպ առաջացած հարկային պարտավորությունները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Գոռ Լյովայի Սարգսյանը ծանուցումը և իրազեկումը ստանալուց հետո, պնդում չի ներկայացրել լուծման անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լուծման անցկացվել:

3.Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 224-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական

հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, ինչպես նաև բազմաբնակարան շենքի բնակարանների և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերի՝ բազմաբնակարան շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով այդ սեփականատերերին պատկանող հողամասի մասով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ համայնքի ղեկավարն օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 224-րդ, 225-րդ, 398-րդ և 401-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-60-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Քաղաքացի Գոռ Լյովայի Սարգսյանից հօգուտ Աշոցք համայնքի բյուջե գանձել 531 363 (հինգ հարյուր երեսունմեկ հազար երեք հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ՝ որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Որոշումն օրենքով սահմանված կարգով՝ պատշաճ ձևով հանձնել Գոռ Լյովայի Սարգսյանին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակիցներին իրազեկելուն հաջորդող օրվանից(ashotsq.am և azdarar.am կայքերի միջոցով):

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Աշոցք համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ



2024 թ. ապրիլի 22
գ.Աշոցք